ՄԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագիրս գրկացուի ու ևս իւր համառօտ յայտարարութիւնս տպել ուզէ տառէ պետէ չէնչէ ամէն 4 տարի համար 1 ղուշի պիտի։

Հրատարակվածը ըստ ամի 4 ի ին։ Տարեկան բաժանորդագրութիւնս գինն է 6 մանէթ։

ԼՈՆԴՈՆ · ՄԱՐՏԻ 7. 1864 ԱՄԻ · №10.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Աւստրիայի եւ Պրուսիայի քաղաքականութեան վերայ Շլեզվիգի եւ Իտալիայի գործքերի մէջ։

Մի անդրնական լրագրում գրում են. Փարիզի Թըղթակիցը հաղորդում է մեզ, հիմնվելով մի արժանահաւատ անձնի խօսքերի վերայ, այնպիսի նոր լուր, որոր աւելի նշանաւոր է, քան ինչըր մինչև ցայժմ հեռագիրները հաղորդել են մեզ նոցա (Աւստրիայի և Ֆրանսիայի) դիտաւորութիւնների և նպատակների մասին։ Փարիզում պատմում են, որ Վիննայի և Բեռլինի արքունիքների մէջ եղած ծածուկ պայմանագրութեան զօրութեամբ Պրուսիան պէտք է միացնէ իր երկիրների հետ Հոլշտէյնը և Դանիայի մի քանի մեծ գաւառները։ Մեզ կարիք չկայ խօսելու այս պայմանագրութեան որպիսութեան վերայ. եթէ միայն այսպիսի մի բան կայ յիշաւի, այն ևս հերիք է։ Երբ այնպիսի դիտաւորութիւնը Պրուսիայի կ'հրատարակվի, արդէն բիսմարքի կեղծվելը աշխարայ կ'լինի, իբրև թէ նա ցանկանում է Գերմանական Դաշնակցութեան օգուտն և այն անիրաւ պատերազմը կ'ընդունէ հէնների արշաւանքի կերպարանք։ Ֆրանսիային և Իտալիային կ'տայ այս ազգային իրաւանց դէմ գործած դաւաճանութիւնը իրաւունք ոտնակոխ անելու 1815ի դաշնադրութեան ճնացորդները, բայց մենք հաղորդում ենք այս համբաւը, իբրև լուր. մինչև հանգամանքները նրան կ'ապացուցանեն և կ'հաստատեն։ Այս լուրը այնքան նշանաւոր է, որ դժուար է նրան քննութեան տակ գցել. հիմնվելով միայն կարծիքների վերայ։ Եթէ նա իրաւ հաստատ լուր լինէր, կ'տար պատճառ գուշակութիւններ անելու, թէ Աւստրիան ի՞նչ գնով առել է Պրուսիայից այն ընծան։ Արդեօք սա չէ խոստացել հարկաւորութեան ժամանակ պաշտպանելու Աւստրիայի այն գաւառները, որոնք Գերմանական երկիրներ չեն

Պատերազմը ծանուցանում է զանազան լուրեր և այս արուածքին կարգի լուրը, գուցէ ունի միևնոյն ծագումն, ինչպէս այն, թէ Անգղիացիները պէտք է բռնեն կոպենհագէնը։ Դեռ անյայտ է, թէ ի՞նչ կանէ կամ ինչ չի անել Անգղիան։ Եթէ Ֆրանսիան կամենում է միայն դեռ ականատես լինել անցքերին, մենք էլ կարող ենք մի և նոյնը անել, մանաւանդ տեսնելով, ինչպէս փոքրիկ տէրութիւնը դէմ է դնում արշաւանքին, տեղի տալով միայն բազմութեան զօրութեանը։ Եթէ զօրութիւնը ընդունվում է, իբրև իրաւունք, այս վտանգաւոր նեցուկ է։

Այս մասին Ֆրանսիայի Presse լրագիրը անում է հետևեալ խորհրդածութիւնը։ «Մի քանի ժամանակ է, որ շատ պարապեցնում է հասարակութիւնը այն գաղտնի դաշնադրութիւնը, որոնք իբրև թէ կայացել է Պրուսիայի և Աւստրիայի մէջ, նոցա միջամտութեան մասին դքսութիւնների հարցի մէջ։ Աւստրիան պարտաւորվում է օգնական լինելու Հոլշտէյնի միանալուն Պրուսիայի հետ, իսկ սա խոստանում է փոխարէն իր օգնութիւնը, եթէ ծագելու լինի պատերազմ Մինչև էլբ ափերում (Իտալիայի և Աւստրիայի մէջ) կամ ապստամբութիւն Մաճառստանում։ Ի՞նչ արժէ այս հաւատ բան կայ այս լուրերի մէջ։ Ոչ մի բան այն-

քան պատճառ չէ տալիս դաշակութիւնների և կարծիքների, ինչպես մի բանի խորհրդաւորութիւնը գաղտնի պայմանագրութիւնը արդարացնում է ամէն մեկ նուիրեալ ու ամէն վտանգների պատճառ է տալիս: Եթէ քաղաքականութիւնը ծածկում է որևիցէ դաշնագրութիւն, այս կ'նշանակէ, նա վախենում է հասարակայ կարծիքից: Ամէնքն էլ յիշում են այն մեկնութիւնները, որոնք պատճառեց 1863-ի փետրվարի 8-ի ծածուկ դաշնագրութիւնը Պրուսիայի և Ռուսաստանի մէջ: Ժամանակը և դէպքերը ջրեցին այն մեկնաբանութիւնները. և մենք կարծում ենք, որ միևնոյնը կ'լինի ներկայ լուրերի հետ:

Բայց մենք, պէտք է, ընդունենք, որ դաշնագրութիւնը յիրաւի կայ, միայն նա նշանակեալ ժամանակով է եղած: Այս բանը լաւ հասկանալու համար, պէտք է յիշենք այն հանգամանքները, որոնց մէջ կայացել է նա: Աւստրիան Պրուսիայի հետ միայն սկսել է պատերազմ Դանիայի դէմ: Աւստրիան էյդերի ափերը խրկել է 50,000 զօրք և գուցէ դէպքերը ստիպեն նրան աւելի զօրացնելը այնտեղ իր զօրքի թիւը: Ուստի և նա պէտք է աչքի առջևը ունենայ, որ կարող է միևնոյն ժամանակ պատերազմ ծագել Մինչհօյի եզերքներում: Այս շարժումն կարող է տարածվել նորա Դանուբեան գաւառների մէջ էլ ուր կարող է Մահառատանը տպատամբել: Ուրեմն նա ստիպված էր պահանջել Պրուսիայի օգնութիւնը և նորա երաշխաւորութիւնը վնասակի երկրի համար: Բայց երբ խաղաղութիւն կ'լինի գործութիւններում, այն երաշխաւորութիւնն էլ կը վերջանայ: Աւստրիան այն ժամանակ իր բոլոր ջուրութիւնը իր ձեռքումն կ'ունենայ թշնամիների դէմ գնելու ու ապստամբութիւնները ճնշելու համար: Ահա այս է, կարծեօք, ճշմարիտը յիշեալ լուրերի մէջ: Մենք առաջ ենք բերում իրողութիւնները, առանց նրանց մեր հաւանութիւնը տալու: Կարելի՞ է միթէ դովել Աւստրիայի և Պրուսիայի անմտութիւնը, որոնք էյդերի մօտ պատերազմում են ազգայնութեանց պաշտպանութեան համար. իսկ Էլբի ափերում (Իտալիայում) ճնշում են նոյն սկզբմունքը: Ինչպիսի՛ տխուր կուրութիւն տիրում է մի քանի կառավարութեանց վրայ: Բայց Եւրոպան յանկանում է խաղաղութիւն, ամենքը բողոքում են պատերազմի կուսակիցների դէմ, ամէն կողմերից լսվում են ձայներ ընդհանուր խաղաղութեան պահպանման համար և յանկարծ Աւստրիան և Պրուսիան արշաւում են Շլեզվիգի վերայ: Այս հեռի՛ք չէ: Աւստրիան առաջուց պահանջում է Պրուսիայի միջնորդութիւնը Մահառատանում կամ Էլբի ափերում, հենց կարծես, չգիտէ, որ ամէն միջնորդութիւն վաղ թէ ուշ պէտք է առաջնորդէ դէպի պատերազմ: Այս պատճառով Աւստրիական—Պրուսական դաշնադրութիւնը դատապարտելի է:

Մի Շվեդացու նամակը Դանիացիների ժրաջան գրութեան վերայ:

Մի Ֆրանսիացի լրագրի մէջ տպած էր մի Շվեդացու, որոնը երկար ժամանակ բնակած էր Կոպէնհագէնում, հետևեալ նամակը ներկայ անցքերի վերայ:

«Մենք կատարելապէս հասկանում ենք Դանիացւոց անբաւականութիւնը առաջին րոպէում, երբ նոքա սառցեան անակնկալ լուրը իրանց զօրքերի յետ քաշվելու մասին: Բայց քիչ մտածելից յետ կայանի բան է, ամէն մարդ աւելի հիմնաւորապէս կ'կշռէ անցքերի գրութիւնը: Հարկաւոր չէ ունենալ առանձին զինուորական գիտութեանց տեղեկութիւններ, որ հասկանալ կարելի լինէր, որ արդէն պարզ միտքը լինքը հրամայում էր զօրքերին յետ քաշնել: Դանիայի զօրավարը արժանի կ'լինէր պատասխանի մատնվելու, եթէ այս միջոցը չի գործ էր դրել որոնը յայտնի բան է, նորա համար շատ ցաւալի էր:

Թէև մենք անձամբ պատիւ ունենք ճանաչելու գեներալ Մէյլին. միայն մեզ չենք ներում քննելու նորա որակութիւնները, իբրև զօրավարի, բայց գիտենք, որ քաջութեան օրինակ է նա և շատ հոգացող իր զինուորների վերայ, որոնք նրան շատ սիրում են և առանձին հաւատարմութիւն ունին դէպի նա: Եթէ մենք ներկինք մեզ նրան յանդիմանելու, այս պէտք է արել էինք միայն նորա համար, որ նա մի քանի օր առաջ չէր հրաման տուել իր զօրաց յետ քաշվելու: Նրան էլ այնքան կ'դատապարտէին, որքան և այժմ, միայն նա կ'ազատէր շատ զինուորների կեանքը, որոնք չի զօր զգեան շտապով յետ քաշվելու պատճառով: Յայտնի բան է, նա իր ազգակիցների դատապարտութեանը, որին բնաւ արժանի չէ, ստոյիկեան հանգստութեամբ կ'տանէ, որնոր տալիս է նրան բարեխնդճ կատարումն իր պաշտօնի, իբր զօրավարի, որնոր չպէտք է չի զօր իր զինուորների կեանքը վտանգի մէջ դնէ: Եթէ Դանիայի զօրավարը իր իշխանութեան տակ ունենար 80,000 զօրք, նա կարող էր մի քանի ժամանակ և մինչև անգամ բաւական երկար 150,000 հոգուց բաղկացած գերմանական զօրքին դէմ կենալ, բայց ունենալով միայն —40,000 զօրք, նա չէր կարող անշուշտ մօտ 100,000 հոգուց բաղկացած թշնամուն ընդդիմանալ. մանաւանդ այնպիսի ընդարձակ տարածութեան վերայ, ինչպիսի է Ֆրիդրիխշտատից մինչև կապէնը, առանց իր բոլոր զօրքը կորցնելու վտանգի մէջը ընկնելու: Այս բանը լաւ հասկանալու համար հարկաւոր չէ, ոչ զինուորական լինելու և ոչ էլ մանրամասնաբար գիտենալու երկրի տեղագրութիւնը, այլ հերիք է միայն նայել քարտեսի վերայ: Մենք մեծ ցաւակցութեամբ տեսնում ենք,

որ Դանիացւոց ազգը շատ դրգռված է և կասկածանքով է նայում Խրիստիանն Թագաւորի վերայ, որ սա իր զօրքի մեծ մասի կեանքը փրկել է տեղն տալվը միայն, որնոր չափազանց դիպել է ազգի անձնասիրութեանը: Այս պատճառով Թագաւորը շատ նեղ և դժուար դրութեան մէջ է: Գահը նստելես նա մտածում էր, որ նորա իրաւացը հաւանութիւն է տուել Եւրոպական տէրութեանց մեծ մասը, բայց դժբաղդաբար 1852-ին դքսութիւնների բնակիչներուն բնաւ հարցուփորձ չէին արել և սոքա միացել էին իրանց զգայմունքների մէջ, Գերմանիային մոերիմ: Առանց մարդարէ լինելու կարելի է ասել Դանիան միայն մի միջոց ունի դքսութիւնները իր իշխանութեան տակ պահելու համար, այն է, տալ նրանց կառավարել ազատութիւն բացի Շլեզվիգի հիւսիսային մասնից, որնոր կարելի է Լաւենբուրգի հետ փոխել և դքսութիւնները Դանիայի հետ կապել միայն Թագաւորական տան ժառանգական իրաւանց զօրութեամբը: Խրիստիանն Թագաւորը, սրանից լաւ միջոց չունենալու պատճառով կ'համաձայներ սրան էլ միայն Դանիացւոց ազգը այլապէս է մտածում և այսպիսի մտածողութեան մէջ բացի ոչ մի նիւթական և քաղաքական շահ չգտնելից, ընդհակառակն տեսնում է շատ պատճառներ ապագայ ժամանակի անհամաձայնութեանց համար:

Այժմ թէ ինչ հետևանքներ կ'ունենան այս անհամաձայնութիւնքը Թագաւորի և ազգի մէջ, չգիտենք. բայց հաւատալի ենք, որ եթէ ներկայ հանգամանքները ծագած լինէին մի քանի ամիս առաջ հանդուցեալ Ֆրեդերիկ Թագաւորի ժամանակը, սա իր ազգի զգացմանցը մասնակից կ'լինէր և կ'ասէր. «Ես աւելի յօժարութեամբ Թագս վայր կ'դնեմ, քան հաւանութիւն կ'տամ այսպիսի պայմանների, իսկ դուք պէտք է ընտրութիւն անէք երկու բանի մէջ, կամ հաստարակապետութիւն կազմէք և կամ միանաք Սկանդինաւիայի (Շվեդիա և Նորվեգիա) հետ: Եթէ Եւրոպայի մէջ կայ մի ազգ, որնոր հասած է հաստարակապետութիւն կազմելու համար, այն դուք էք, յայտնի բան է: Դուք վայելում էք ընդհանուր բարօրութիւն և ձեր մէջ միաձայնութիւն, ձեզ հետ բնաւ որոշութեան ոչ մարդ [illegible] քան հետ, հաւասար [illegible] իրաւանք: Միւս կողմից տուք տէրը կշռեր, եթէ որոշող ձեզ էր խոստացել [illegible] մեծ նեղութեան և քաղաքական [illegible] Սկանդինաւիայի հետ միանալը [illegible] ձեր ապագայ անկախութիւնը արդեօք պահպանել [illegible] կարելի՞ է ազգիդ ներկայ Թագաւորով ապահովել անձնասիրութիւն սպասել:

Times» լսագիրը [illegible] դրա վերայ [illegible]

դոյ Թղթակցի հետ միասին տեսնում ենք, Դանիայի Թագաւորի ծանր և տխուր դրութիւնը. միայն կարծում ենք, որ Թագաւորի անձնական իրաւանց հիման վերայ եղած դաշնակցութիւնը դքսութիւնների Դանիայի հետ, ոչ միայն առաջը չի առնել ներկայ դժուարութեանց, այլ պատճառ կ'տայ աւելի նոր ծանր հանգամանքների: Միակ վճիռը, որնոր ներկայումս ամենքին, բացի Դանիայի Թագաւորից, օգտաւէտ է, կայանում է Սկանդինաւեան դաշնակցութեան մէջ:

Գործ քրքի դրութիւնը Տաճկական գաւառներում:

Կիօլնի լրագրի Թղթակիցը դրում է Վիեննայից 4-ին փետրվարի. «Բայի հիւսիսային արևմտեան Եւրոպայի դժուար դրութիւնից առանձին ուշադրութիւն է դարձնում իր վերայ հարաւային արևմտեան Եւրոպայի գործքերի վճռակը: Անժխտելի իրողութիւն է, որ Սերբիայի, Մոլդավիա-Վալաքիայի և Ղարադաղի մէջ կայացել է դաշնակցութիւն, այս երկիրները Տաճկաստանի բարձրագոյն իշխանութիւնից ազատելու դիտաւորութեամբ: Բարձրագոյն Դուռը ունի իր ձեռին ապացոյցներ այս դաշնակցութեան գոյութեան վերայ, որոնք և հաղորդեց այն տէրութեանց, որոնք ստորագրել են փարիզի դաշնագրութիւնը: Մեծ տէրութիւններից Անգղիան և Աւստրիան Տաճկաստանի կողմն են: Միայն Անգղիական քաղաքականութեան պղտորութիւնը կատանգնում է առաջվանից շատ նուազ է այժմ, այս վերաբերմամբ Ֆրանսիայի դիտմանի ներգործութեանը: Ֆրանսիան երկմիտ դրութիւն է պահում և ամենքն էլ ասում են, որ Նապոլէոնը կամենում է իր ձեռին ունենալ արևելեան հարցը, որ սրան պատհ ժամանակին նպաստ դնի Անգղիայի դէմ:

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մեր ստացած վերջին տեղեկութիւններից երևում է, որ Կ. Պոլսի ազգայնոց մէջ ծագել է նոր երկպառակութեան առարիթ, այն է, ազգագրութեան կանոնները: Կրօնական ժողովը, իւր անդամոց մեծ մասի անհամակցողութեան պատճառով, հակառակում է ազգագրութեան [illegible] քաղաքական ժողովի [illegible] այն [illegible] մեծ դժնդակութիւն է ազգի անկեղծ [illegible] Ազգային ժողովի [illegible] կողմնակիցները: [illegible] [illegible] [illegible]

դեռ ևս մեր եկեղեցականների շատ յետադիմ լինելուն Տաճկաստանի մէջ, ժամանակի պահանջմանց հետ համեմատելով: Նոքա փոխանակ իրանց օգնութեամբը պաշտպանելու ազգի մտաւոր ազատութիւնը բռնաւոր կառավարութեան դէմ, իրանք աշխատումեն աւելի ճնշել ազգի ոգին այնքան, որ Տաճկի կառավարութեան կանոններով սահմանած պէտք է լինի ազգը իրան նոցա բռնութեան դէմ պաշտպանելու: Այս է ահա մեր ազգի մեծ թշուառութիւններից մէկն էլ, որ աշխարհականները սահմանած են շատ անգամ մարդանց չլսու իրանց եկեղեցականների դէմ մի կողմից, և այլ ազգ կառավարութեան դէմ միւս կողմից ու այնպէս դժուարութեամբ և նեղութեամբ ձեռք բերել այն, ինչ որ Աստուած ինքը տուել է մարդուս, իբրև բանաւոր արարածի: Սորա պատճառը այն է, որ մեր եկեղեցականները աւելի հեշտ են համարում բռնանալ, քան իրանը զսպելով ժողովրդականներին լաւութեան օրինակ դառնալ: Այսպիսի հակառակութիւններով է, որ շատ ծաղիկներ ազգի անդաստանում չորացել են և ազգի մէջ ամէն բան ծանրաքայլ է առաջ գնում:

—Գիտենք, որ պէտք է ասեն, թէ ահա էլի բերանը բաց է արել, ամբիոից ձեռը վեր է առել ու յարձակումէ մէկի կամ միւսի վերայ. բայց ամէն օրինաւոր մարդու համար, ինչ էլ որ ասեն, բոլորը ոչինչ, պէտք է, երևին, ու ճշմարիտ լինի նա միայն իր խղճմտանքի առաջին, որի հանդստութիւնը հանդարտ մտածման ժամանակ ամէնից արդար դատաւորն է:

Անցեալ մայիս 28-ին Երևկոյեան մի խօսելոյի դերասանուհի տ. Զանդիերու բենեֆիսն էր և յիրաւի արժան էր տեսնել ծափահարութիւնները, փառաւորութիւնը և այն մեծամեծ ընծաները, որոնք արին յիշեալ դերասանուհուն, և այս բաւականութիւնը ու ուրախութիւնը շատ արժան է նատել յարգոյ հասարակութեան թատրոնասէր կամ իրանց ոճով ասել դեղարուեստասէր անդամներին (եթէ միայն կարելի է այսպէս ասել), ոչ աւելի է նատել քան 6—7,000 մանեթ. ինչպէս լսել ենք: Մեծ բան է կամքը, սա ամէն բան կարող է անել, մանաւանդ եթէ հետեւում է կրքերին, ու սրանց բաւականութիւն է պատճառում. բայց կրքերը շատ են մարդուս մէջ ախտ դառնում, եթէ միտքը չէ զսպում նրանց և չէ կառավարում:

Յիրաւի զովելի է այս երիտասարդների և հասակաւորների եռանդը այս մասին, որոնք օրերով վազվզում էին դէսուդէն, վերդովում, վիճում, աշխատում, ամէն ձիզը թափում, որ, որքան կարելի է, աւելի հոյակապ լիներ ներկայացումն և դերասանուհու արդիւնքը մեծ այն օր: Ցաւոնի բան է, նոքա մեղաւոր չեն, նոքա կարծումեն, թէ մեծամեծ սխրագործութիւններ են անում և յիրաւի այդպէս էլ է, որովհետև կարծումենք, թէ ոչ մի նշանաւոր գործքի համար կարճ միջոցումն այդպիսի նշանաւոր դումարներ հաւաքել ու ծախել կարողացած չէ ոչ ոք այս հասարակութեան մէջ, ուր մարդիկ ըստ մեծի մասին, եթէ մի օգտաւէտ գործքի ստորագրութեան համար հրաւիրած լինին մի տեղ կամ չեն երթալ և կամ գնալից յետ էլ այնպէս դուրս կը սլանքվին, որ առնից սրատեսն էլ չի տեսնիլ նրանց: Բայց ցաւալի է շատ, որ այս եռանդը բոլորովին ծուռը ընթացք է ընդունում մանաւանդ մեր Հայերի մէջ, որոնց բոլորովին ձեռնտու չեն այսպիսի գործքերը: Մենք հասկանումենք այսպիսի մեծ ծախսեր անելը մի հարուստ հասարակութեան մէջ, որոնց ունենալով առնից առնաս կարևոր բաները, պէտք ունի և փառահեղութեան ու շռայլութեան էլ, որոնք ըստ մեծի մասին առաջանում է հարստութեան և բարօրութեան առաւելութիւնից. իսկ մեր մէջ, ուր կարօտ ենք մարդուս կեանքի առնաս հարկաւոր պիտոյքներին էլ այսպիսի գործքեր տեսնելը շատ ծանր, պէտք է, թվի առնից զգացող սրտի համար: Մենք, որոնք շատ պակասութիւններ ունինք, թէ բարոյապէս և թէ նիւթապէս, ծաղրալի միայն կարող ենք լինել այսպիսի մեծադործութիւններով:

Այստեղ ազգը մտաւոր խաւարի մէջ խարխափելով ընկումէ,—այնտեղ թատրոնի աչք շլացնող լուսաւորութեան համար գանձեր են վատնվում: այստեղ եկեղեցիները փուշիով լիքն են — այնտեղ թատրոնի բեմը թանկագին ծաղիկներով զարդարումէն: Այստեղ ազգային դպրոցները, ազգի ապագայ երջանկութեան և բարօրութեան տները, անմաքուր աղքատութիւնից, աւերակ, շուռտով բուերի բնակարան դառնալու մօտենումեն—այնտեղ թէատրոնը բարգաւաճումէ, զարդարվում ու նորահարսի պէս պճնումէ: Այստեղ մեր ծխական ուսումնարանների մէջ ցրտից խեղճուկ աշակերտները կնկոռնումեն—այնտեղ թէատրոնումը մեծ շքից երիտասարդները քրտնումէ: Այստեղ դպրոցները և ժողովուրդը կարդալու գրքերի կարօտ է—այնտեղ թէատրոն դնալու շորերի ու զբաքաների համար դանձեր են ծախվում: Այստեղ հասարակութեան մէջ ընտանեաց տէր մարդիկ իրանց որդկերանցով—օրվան հացի կարօտ, սովով ու ծարաւով իրանց օրերը անցկացնումէ այնտեղ կուշտ դերասանները ու դերասանուհիները ծանրանումէ պարգևների առատութիւնից: Մենք թատրոնի պայծառութեանը հակառակ չենք, այլ կարծումենք, որ նորա հետ միասին միւս ամենահարկաւոր բաներն էլ պէտք է կատարեալ լինեն, որ ամէն բան բնական երևի:

Այժմ դուք իրանդ վճռեցէք, յարգոյ ընթերցողներ, արդեօք հնար կայ մի զգացող մարդու համար

անվերջով աչքով նայելու այսպիսի լողձալի վիճակի վրայ: Ա.ինտեղ ազգից հազարաւոր վերսաներ հեռու խեղճի մկկը գիշեր ցերեկ իր արևը խաւարացնելով մտածումէ, որքան ձեռքից կ'գայ, իր ազգակիցների թշուառութեանցը ու խեղճ վիճակին ձար ու դարման տանել: գիշերը քունը կոտրումէ, աչքը կուրացնում ու վերջն էլ իրան մահն և բաժին է ընտրում աղքատութիւնը —այստեղ բազմաթիւ միջոցները ձեռքին ունեցողը, իր թշուառ եղբարց մէջ բնակելով, ամեն օր նոցա թշուառութիւնները տեսնելով, սառնութեամբ ծիծաղումէ նոցա վերայ ու արհամարհում նրանց, մոռանալով իր մարդկութիւնը ու բաղդի խաբէբայ լինելը, որնոր հզուց իրան էլ կարող է ընկղմել նոյն հորի մէջ: Յիրաւի, որ շատ անգամ մարդուս սիրտը քարանումէ եղել:

Մեկ տեղ հարիւրաւոր ընտանիքներ վիհ են գլորվում իրանց տգիտութեամբ, միւս տեղ հազարաւորներ հալածվումեն, տանջվում, չարչարվում տաճկի բռնութիւնից ու մօտ են տարկութեան խորխորատին ու այն անձինք, որոնք կարող էին նրանց օգնութեան ձեռն կարկառել, փոխանակ իրանց եղբարցը ազատելու, իրանք սառնութեամբ ծափահարումեն նոցա անկման վերայ: կուրութիւն և անմարդութիւն:

Այս բաները տեսնելիս մարդուս սիրտն վրդովումէ ու միտքը մոլորվում ու չգիտէ թէ ի՞նչ մտածէ: Թող այսպիսի մեծամեծ մարդիկ յարդ և պատիւ պահանջեն, խեղճերից, իրանք իրանց վարձը թող դուշակեն:

Այս ամեն բանի բոլոր պատճառը կրթութեան և ուսման պակասութիւնն է, որնոց մասին շատ ծնողներ բոլորովին հոգս չեն քաշել, չեն քաշում և կամ չգիտեն քաշել: Քանի մեր հարուստներից մի քանիսը իրանց օրինակով խրատ չեն դառնալ հասարակութեան մէջ, իրանց որդոց լաւ կրթելով և կամ փչացած որդոցը պատժելով, այս մահաբերը ախտը դժուար կ'վերջանայ մերերի մէջից:

Այս ամենայն չարիք մտանեն 'ի միտս մարդոյ յանուսումնութենէ, կոյր զրկի 'ի ճառագայթից արեգական, իսկ տգիտութիւնն զրկի 'ի կատարեալ կենաց, լաւ է կոյր աչքք քան կոյր մտաք:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՋԻՒՆԱՆՄԱՆ:

Շատ տարի առաջ մէկ ձմեռ օր, երբ երկնքից դալկես էր ձիւն և ծածկումէր դետինը, կարծես, փետուրներով, թագուհին նստած էր պատուհանի մօտ, կարելով մէկ սև ձեռագործ, այնպէս սև, ինչպէս մի ագռաւի թևը: Եւ ահա նստած նա կարում էր ու մտիկ տալիս ձիւնի վրայ, այն րոպէին նա ցցեց ասեղը մատի մէջ, և երեք կաթ արեան կաթիլ կաթեցան սև շորի վրայ: Եւ այն կարմրագոյն արիւնը գեղեցիկ փայլում էր այն սև շորի վրայ: Թագուհին մտիկ էր տալի և մտածումէր ինքն իրան, թէ լաւ կ'լինէր, որ ծներ իրան աղջիկ այնպիսի սպիտակ, ինչպէս այն ձիւնը, այնպիսի կարմիր ինչպէս արիւնը և սև ինչպէս այն սև շորը: Եւ ղորդ որ, մի տարիից յետոյ ծնաւ նա գեղեցիկ աղջիկ սպիտակ ինչպէս ձիւն, կարմիր ինչպէս արիւնը և այնպիսի սևաթոյր մազերով, ինչպէս ագռաւի թևերը, սորա համար նրան անուանեցին Ջիւնանման: երբ Ջիւնանմանը ծնաւ, թագուհին՝ նորա մայրը շուտով մեռաւ:

Շատ տրտմեցաւ նորա համար թագաւորը: Բայց մէկ տարիից նա ուզեց ուրիշ կին, որնոր շատ գեղեցիկ էր, միայն հպարտ էլ էր և շատ դուռդ այնպէս որ չէր կարող տանել այն մտքին, որ աշխարհիս վրայ լինի ուրիշ մի գեղեցիկ կին, ինչպէս ինքն: Նա ունէր դիւթական հայելի, որնոր իր առջևը դնում էր, և խօսում էր նորա հետ.

Հայելի՛, հայելի՛ սան ուզեղ,
Ես եմ աշխարհիս վրայ գեղեցիկը,
Ամենից սիրունը և սպիտակը:
Բայց հայելին պատասխանում էր,
Իրաւ այդպէս է.
Դու ես թագուհի գեղեցիկ
Ամենից սիրուն և սպիտակ:

Այն ժամանակ թագուհին սկսում էր ծիծաղել և ուրախանում էր, որ հայելին ասում էր նորան այս հաճոյական և ճշմարիտ խօսքը:

Բայց Ջիւնանմանը մեծանում էր մեծնում, և օրից օր գեղեցկանում էր և սպիտականում: Երբ նա դառաւ եօթն տարեկան, նա գեղեցկացաւ ինչպէս պայծառ և գեղեցիկ օր, և շատ գեղեցիկ էր քան թէ թագուհին: Ահա մէկ անգամ հանեց թագուհին հայելին, դրեց առջևը և ասում է նրան.

Հայելի՛, հայելի՛, սան ուզեղը,
Ես եմ աշխարհիս վրայ գեղեցիկը,
Ամենից սիրուն և սպիտակը:
Բայց հայելին պատասխանում է.
Դու գեղեցիկ ես իրաւ է.
Բայց Ջիւնանմանը ամենից սիրուն է,
Ամենից գեղեցիկ և սպիտակ է:

Շատ ախրեցրուց այս թագուհուն, նա կանանչացաւ և դեղնեցաւ չարութիւնից, և երբ էլ մտիկ էր տալի Ջիւնանմանին սաստիկ բարկանում էր այն խեղճ երեխի վրայ, թագուհու նախանձը և դառդութիւնը չափից անցան, այնպէս որ նա ոչ ցերեկը ոչ էլ գիշերը հանգ-

ստութիւն չունէր: Նա էլ չկարողացաւ հանդիսել. նա կանչում է իրա Հաւատարիմ Ծառային՝ ձիապանին ու ասում է նրան.

—Տար այս աղջկան թաւ անտառների մէջ, ես չեմ կարող իմ փայլուն աչքերով նայել դրա վերայ՝ այնտեղ շատ հեռու. անտառների մէջ, սպանիր նրան, հանիր նորա կրծքից սիրտը և բեր ինձ մօտ, որ ես պիտենամ, որ դա էլ կիայ աշխարհումս:

Հաւատարիմ Ծառան հնազանդեցաւ, նա տարաւ փոքրիկ Թագուհուն թաւ անտառը: Բայց երբ նա հանեց դանակը և դրեց այն Ջունանմանի կուրծքի վերայ, որ սպանէ նրան, լաց եղաւ փոքրիկ Թագուհին, և ասաց նրան.

Ա՛հ, բարի Ծառայ մի՛ սպանիր ինձ. ես քեզ խոստանում եմ, որ կ'փախչեմ այստեղից շատ հեռու անտառների մէջ և երբէք յետ չեմ դառնալ: Նա էր դիւղեցիկ և շատ խնդրում էր, այնպէս որ Ծառան խղճայ, և ասում է նրան,—«բայց շուտով, երեխայ, փախիր շուտով, քանի որ կարող ես շատ հեռու անտառների մէջ». Բայց ինքը իրան մտածում է. «Գոլերը մէկ է, քեզ վայրենի գազանները կ'պատառեն»: Հէնց կարծես մի ծանր քար վեր ընկաւ քաջ ձիապանի սրտի վերայից, երբ աղաչվեցաւ Թագուհու արիւնը թափելու պարտաւորութիւնից: Այս ժամանակ գուբս եկաւ Թիւից մի փոքրիկ վարազ. Ծառան շուտով ցցեց իր դանակը նորա կուրծքը հանեց նորա սիրտը և տարաւ Թագուհու մօտ, որ ցոյց տայ, Թէ կատարել է նորա հրամանը: Խոհարարին հրամայեց Թագուհին, որ խորովէ այն սիրտը և խորթ մայրը կերաւ այն, կարծելով Թէ ուտում է Ջունանմանի սիրտը: Խեղճ փոքրիկ Թագուհին գնում էր մինակ անտառի մէջ, նա այնպէս վախեցած էր, որ մինչև անգամ Ծառերի տերևների շարժումից դողում էր: Նա, իրրև փոքրիկ երևոյթ, ի՞նչ հնար կարող էր մտածել, որ աղատվի այնպիսի Թշուառութիւնից: Յանկարծ նա սկսաւ վազել, որքան ոտ զօրութիւն ունէր, վազում էր, վազում և նորա չորս կողմում վայրենի գազանները վազվզում էին, բայց նրան ձեռք չէին տալի: Շատ ժամանակ վազում էր նա մինչև որ էլ չկարողացաւ: Արդէն մթնում էր և ահա նա տեսնում է [illegible]

[illegible]

ծածկած էին ձեան պէս սպիտակ տատասներով: Ջիւնանմանը մեռնում էր սովից, ուստի զարմանալի չէ. որ նա հօմն ամանից էլ քիչ քիչ կերաւ ու հօմն բաժիններից էլ խմեց դինի մէկ մէկ կաթիլ: Նա այնպէս դադրած էր, որ կերաւ Թէ չէ, ուղեց քնել: Ահա նա փորձ արաւ մէկ մահճակալի վրայ. բայց այս նրան լաւ չեկաւ. պատկեցաւ մէկի վրայ շատ մեծ էր. պատկեցաւ միւսի վրայ շատ փոքր եկաւ, վերջապէս հօմիներորդը նրան յարմար եկաւ, և պատկեցաւ նորա վրայ ու անոյշ քնեցաւ: Բայց երբ դիշերը վրայ հասաւ եկան տատոէրները, որոնք հօմն Թզուհիներ էին և որոնք որոնում էին սարում ոսկի և երկաթ, բահը և կացինը ձեռներում բռնած: Նոքա իրանց փոքրիկ մաճերը վառեցին և այն ժամանակ իմացան, որ տանը մէկ անծանօթ մարդ կայ, որովհետև որ ամէն բան կարդին էր գտնում:

Ի՞նչպէս, առաջին Թզուկը ասում է.
Ո՞վ է նստել իմ աթոռի վրայ:
Միւսը նորա հարևից,
Ո՞վ է կերել իմ ամանից:
Երրորդը ասում է.
—Ո՞վ է կտրել իմ հացս:
Չորրորդը ասում է.
Ո՞վ է կերել իմ կանանձեղէնը:
Հինգերորդը ասում է.
—Ո՞վ է ձեռը տուել իմ պատառաքաղս:
Վեցերորդը ասում է.
Ո՞վ է քան կտրել իմ դանակով:
Վերջապէս հօմներորդը ասում է.
—Ո՞վ է խմել իմ բաժակիցս:

Յետոյ առաջին Թզուկը գնաց, որ տեսնէ ամէն անկիւնները մէ, և յանկարծ տեսնելով իր մահճակալի վրայ փոքրիկ վոս աղաւեց.

—Ո՞վ եղել իմ մահճակալիս վրայ:

Միւսները վազեցան իրանց մահճակալների մօտ և բղաւեցին բոլորը միասին.

—Իմ մահճակալի վրայ էլ մէկը պառկել է: Եւ երբ հօմներորդ Թզուկը մոկի տուաւ իր մահճակալին, տեսաւ նորա վերայ քնած Ջիւնանմանին. նա կանչեց իր ընկերներուն, որոնք վազեցին և մոկի տուին ու շատ զարմացան [illegible] իրանց մահճակալի մօտ, տարան մաճերը և լուսաւորեցին նորա երեսը:

Ա՛սաւած իմ, [illegible] բոլորը միասին [illegible]

քնելու, մէկ ժամ մէկի մօտ, երկու ժամ միւսի, և այսպէս դիշերն էլ անց կացաւ։

Ա՛հա լուսացաւ, զարթեցաւ Զիւնանմանը։ Նա տեսաւ եօթն թզուկներուն և շատ վախեցաւ, բայց թզուկները ուրախութեամբ և քաղցրութեամբ մոտիկ էին տալի նորա վրայ և սկսան հարցնել.

Քո անունը ի՞նչ է, օրիորդ։

—Զիւնանման, պատասխանեց նա։

—Ինչպէ՞ս դու մտար մեր խրճիթը։ Այստեղ նա պատմեց, ինչպէս թագուհին նրան կամենում էր սպանել, ինչպէս Ծառան խղճաց նորա վրայ և չսպանեց, ու ինչպէս նա վազեց, վազեց, և եկաւ մինչև նոցա խրճիթը։

Յետոյ թզուկները ասում են նրան.

—Քո ուղում դու մնալ այստեղ մեր տանը տանտիկին, պատրաստել կերակուր, վեր քաղել կողինքը, լուանալ և գործել։ Եթէ համաձայն ես, խոստացիր մեզ, որ ամէն բան կարգով և իստակ կ՚պահես։ Եթէ համաձայն ես, մնա մեզ մօտ թէ դուզ բոլոր կեանքդ, դու մեզ մօտ ոչինչ պակասութիւն չես քաշել։

Զիւնանմանը մնաց նոցա մօտ, և դառաւ տանտիկին։ Տունը պահում էր իստակ և կարգին։ Առաւօտները թզուկները գնում էին սարը երկաթ և ոսկի փորելու, բայց երեկոները յետ էին դառնում և գրանում էին սեղանը արդէն գցած և ճաշն էլ պատրաստ։ Ամբողջ օր Զիւնանմանը տանը մնում էր. որովհետև բարի թզուկները նրան ասում էին.

Տես, զգուշացիր դու քո խորթ մօրից, նա շուտ կը իմանայ, որ դու այստեղ ես։ Ոչ ոքին չթողնես այստեղ, երբ մենք տանը չենք լինիլ։

Բայց թագուհին. թագուհին ուրախանում էր, որ կերաւ Զիւնանմանի սիրտը, և մտածում էր, որ ոչ ոք չկայ աշխարհիս վրայ իրանից գեղեցիկը։ Ահա էլի կանգնեցաւ նա իր հայելու առաջը և ասում է.

Հայելի՛ հայելի՛, ասա՛ ուղիղը,
Ես եմ աշխարհիս վրայ գեղեցիկ,
Ամէնից սիրուն և սպիտակ։

Բայց հայելին պատասխանում է.

Խօսք չկայ, որ դու գեղեցիկ ես.
Բայց սարում այնտեղ,
Եօթն թզուկների մօտ
Զիւնանմանը ամէնից գեղեցիկ է,
Ամէնից սիրուն և սպիտակ է։

Անհանգստացաւ թագուհին։ Նա իմանում էր, որ իր հայելին չի խաբիլ. հասկացաւ որ իր հաւատարիմ Ծառան խաբել էր նրան։ Իմանում էր նա փորձով, որ նախանձը ոչ ցերեկը և ոչ գիշերը չի թողնիլ նրան հանգիստ, մինչև ինքը չմնայ իր թագաւորութեան մէջ ամէնից գեղեցիկը։ Եւ նա շատ մտածմունքների մէջ ընկղմեցաւ, որ ինչպէս գտնէ Զիւնանմանին։

Շատ մտածեց նա և երկար մտածելից յետ վճռեց, որ հարկի բան Ծախող պառաւ կնդայ ընդեր։ Շուտով նա հագնվեցաւ այնպէս, որ ոչ ոք չէր կարող նրան ճանաչել և յետոյ գնաց եօթն թզուկների խրճիթը, ծեծում է պատուհանը և ինքը բղաւում է.

«Լաւ ապրանք են Ծախում, լաւ ապրանք»։

Զիւնանմանը մոտիկ տուեց պատուհանից, և ասաց.

—Բարև, բարի պառաւ, ի՞նչ ես Ծախում։

Ամէն լաւ լաւ ապրանք, պատասխանեց նա, ժապաւէններ և դոյն զդոյն գօտիկներ։

«Ինչի՞ ներս չէթողնեմ այս բարի պառաւին», մտածեց Զիւնանմանը ինքը իրան։ Երկար չմտածեց նա, յետ քաշեց դրան նիզը և գնեց մի գեղեցիկ գօտիկ։

—Սիրելի օրիորդ, մոտիկ արի, ինձ տուր, ես կապեմ քեզ վերայ գօտին, ինչպէս ամէնքը գործ են անում։ Զիւնանմանը չէր իմանում խորամանկութիւն և այն րոպէին կանգնեցաւ պառաւի առջևը կատարելով նորա կամքը, որնոր հուպ տուեց նորա վերայ քամարը։ Բայց այնպէս սաստիկ հուպ տուեց, որ Զիւնանմանը այն րոպէին խեղդած ընկաւ խրճիթի դրան առջևը։

«Հիմակ դու ես ամէնից գեղեցիկը» ասաց պառաւը չար ժպիտով և փախաւ։

Շուտ երեկոյացաւ, եկան թզուկները տուն և ինչպէս վախեցան, երբ տեսան իրանց Զիւնանմանին ընկած անշարժ ու անշունչ, ինչպէս մեռել։ Նոքա շուտով վերկացրին նրան և տեսնելով, որ շատ հուպ է տուած, այն րոպէին կարեցին գօտին։

Զիւնանմանը օխ քաշեց և քիչ քիչ ուշքի եկաւ։

Երբ թզուկները բոլորը իմացան, ինչոր պատահել էր, նոքա ասացին նրան.

—Այն Ծախս անող կինը քո չար մայրդ էր, վախցիր նրանից և ոչ ոքին ներս չթողնես այստեղ, երբ մենք տանը չենք։

Բայց չար թագուհին, ինչպէս տուն դնաց, այն րոպէին իրա հայելու առաջը կանգնեցաւ և ասում է նրան.

Հայելի՛ հայելի՛, ասա՛ ուղիղը
Ես եմ աշխարհիս վրայ գեղեցիկ,
Ամէնից սիրուն և սպիտակ։
Բայց հայելին պատասխանում է.
Խօսք չկայ, որ դու գեղեցիկ ես,
Բայց այնտեղ սարում,
Եօթն թզուկների մօտ հիւր,
Զիւնանմանը ամէնից գեղեցիկ է,
Ամէնից սիրուն և սպիտակ է։

Ինչպէս այս լսեց թագուհին, սաստիկ չիգրը եկաւ. նա հասկացաւ, որ Զիւնանմանը դեռ կենդանի է մնացել։

«Ես այս անգամ կ'գտնեմ ուրիշ միջոց, որով բոլոր բովին կ'ազատվիմ այս անպիտան աղջկից, ասաց նա: Եւ դիւթական գրքուկեամբ, որոր նրան Ծանօթ էր, նա թռուցնաւորեց սանդրը և հագնելով ամենևին ուրիշ պառաւի շորեր, բոլորովին անճանաչելի, գնաց եօթն թզուկների մօտ, և խփելով դուռը բզաւեց.

Լաւ լաւ անպատեհութիւններ եմ ծախում:

Ձիւնանմանը մտիկ տուեց պատուհանից և ասաց, գնա քո ճանապարհը, ինձ հրաման չէ այստեղ ոչ ոքին ներս թողնել:

—Մտիկ տալ էլ հրաման չէ, ասաց պառաւ կինը, հանելով թռուցնաւորած սանդրը և շարժելով այն օդի մէջ, սանդրը շատ գեղեցիկ էր և փոքրիկ թագուհուն այնպէս դուր եկաւ, որ նա խաբվեցաւ, և բաց արաւ դուռը:

Պառաւ կինը ծախեց սանդրը և ասաց.

«Տէր, ես ցոյց տամ քեզ, ինչպէս պէտք է բանեցնել այս սանդրը:

Խեղճ Ձիւնանմանը չունէր խորամանկութիւն և մօտկացաւ պառաւին ու հաղիւ թէ թռուցնաւորած սանդրը դիպաւ նորա մազերին, խեղճը նորա ազդեցութիւնից ընկաւ գետնի վրայ անզգայ:

—Հիմակ էլ չես վերկենալ տեղեդ, ասելով շուտով փախաւ պառաւը:

Նորա բաղդից գիշերը մօտեանում էր, և եօթն թզուկները յետ եկան: Եւ ինչպէս տեսան թէ չէ Ձիւնանմանին գետնի վրայ դրան մօտ, այն րոպէին մտածեցին, որ չար մրուն էլի եկել է, նոքա սկսան փնտռել և տեսան թռուցնաւորած սանդրը, որոր շուտով հանեցին նորա մազերից:

Ձիւնանմանը այն րոպէին ուշքի եկաւ, և պատմեց ինչպէս բանը անց էր կացել:

Թզուկները լսելով նորա պատմածը, էլի սկսան ասել, որ ներս չթողնէ ոչ ոքին, երբ իրանք տանը չեն:

Իր պալատը հասաւ թէ չէ թագուհին, այն րոպէին դարձաւ իր դիւթական հայելուն և ասում է նրան.

Հայելի՛ հայելի՛, ասա՛ ուղիղ
Ես եմ աշխարհիս վրայ գեղեցիկ,
Ամենից սիրուն և սպիտակ:
Բայց հայելին պատասխանում է.
Ծօսք չկայ, որ դու ես գեղեցիկ
Բայց այնտեղ սարումը եօթն թզուկների մօտ
Ձիւնանմանը ամենից գեղեցիկ է:
Ամենից սիրուն և սպիտակ է:

Թագուհին չարութիւնից դալարացաւ, երբ որ հայելին այս խօսքերը ասաց:

Ինչպէս և իցէ, բղաւեց նա չարութեամբ, անպատճառ Ձիւնանմանը պէտք է մեռնի, թէ դուզ այս ինձնից կեանքս պահանջէ»:

Եւ սրանից յետոյ նա մտաւ աննեակը, կոխեց դուռը, որ ոչ ոք չմտնէ այնտեղ, և սկսաւ պատրաստել թիւնաւոր խնձոր:

ԱՂՈՒԷՍԸ ԵՒ ՍԱՐԻ ՄՈՒԿԸ:

«Ո՞ւր ես էդպէս շտապելով վազում, խնամի, աղուէսին հարցրուց սարի մուկը: —Վա՛յ իմ գլխին, խնամի ջան, իմ վերայ շատ են դժել միթամ ես քրթամ եմ ուտում ու ղռլըղուղից հիմի դուրս են անում: Փեղ յայտնի է, որ ես հաւաբունումը դատաւոր էի, շատ դործերը կեանքս մաշվել է, քունս կոտրել եմ, ոչ ուտելս եմ խմացել ոչ խմելս, բայց շնորհակալութիւնի տեղ էդպէս անպատիւ են անում ու պատճառը դիմի վատ լեզուն է: Աբա դուն ու քո հոգին, ով կ'ուզի լաւ մարդ աշխարհքիս երեսին, թէ որ հաւատանք չար լեզուներուն: Ես քրթամ կուտեմ միթէ ես գժվել եմ, աբա դուն ու քու Աստուածը, դրուատը ասա, իմ ուտելը տեսնէ ես, մկկ լաւ միտք արա:—Չէ, խնամի, ինչ սուտ ասեմ, բայց շատ անգամ տեսել եմ բումբուլը դընչիդ կըպած:

Կայ մարդ որ գիշեր ու ցերեկ լաց է ընում՝ թէ խեղճ է, օրվայ հաց չունի ուտելու, ու ղրկ որ սաղ քաղաքը գիտէ, որ նա դռնըռւղից աւել ոչինչ գելուր չունի, ոչ ինքը, ոչ կնիկը, բայց տեսնում ես քիչ քիչ, կամ տուն է առնում, կամ գետ, կամ ուրիշ մուլք: Հիմի թէ որ սրա գելուրն ու մլոսը հետաբ անես, թէ դուզ օրինքով ոչինչ սաբութ չես անիլ, բայց ի՞նչպէս չես մեղանչել ու չես ասիլ, թէ նրա դունչը բումբուլոտ է:

Թարգմանեց Կոխլովից Ս. Խալ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Նորատիպ մատեան «Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան» աշխատասիրեաց պարոն Կարապետ Փօչարեանց, տպեալ ի Տփխիս ի տպարանի Պ. Չամբարձում Լիֆիտաճեանց: Գինն է 80 կոպէկ, ծախուում է ի Թիֆլիզ Պ. Չամբարձում Լիֆիտաճեանցի դուքանում և Ներսիսեան ուսումնարանում արժանապատիւ տէր Թադէոս քահանային մօտ, 10 և աւելի առնողին % 20 զեղչումն կը լինի:

Հրատարակիչ Հ. Էնֆիաձեանց (ի տպարանի Հ. Էնֆիաձեանց
Խմբագիր Պ. Սիմէօնեանց (եի Ընկերութեան:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 7 марта 1864 г.
ТИФЛИСЪ.